

Անձնագրի վավերականության ժամկետը երկարացնելը

Անձնագրի վավերականության ժամկետը երկարացնելու համար հաշվառում ունեցող քաղաքացին կամ քաղաքացու կողմից լիազորված անձը (լիազորագիրը վավերացված նոտարական կարգով) ներկայանում է ԼՂՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանում կամ անձնագրերի և վիզաների բաժին՝ ներկայացնելով անձնագիրը:

Անձնագրի վավերականության ժամկետը երկարացվում է ժամկետը լրանալու օրվանից 5 տարի ժամանակով:

Անձնագրի վավերականության ժամկետը երկարացնելու համար որևէ վճարում չի կատարվում:

ԼՂՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների բաժնում անձնագրի վավերականության ժամկետի երկարացումը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում: